

ցաւ իր գործերը և վաճառականական տուրեառութիւնները լաւ կերպով ի գլուխ հանելու, յորում մեծ խոհեմութիւն ցոյց տուաւ, ինչպէս նաև վարման եղանակաւը՝ Ապահանի մէջ բնակող նշանաւոր ազգայնոց և եւրոպացոց հետ։ Մի քանի տարի վերջը մեռաւ Աստրախանի մէջ իրքեարի կաթոլիկ, յամօթ իր ազգակից բաժանեալ եպիսկոպոսաց, և հետո գերեզման տարաւ իր կարծեցեալ իրաւոնքը, չայսատանի ապագայ թագաւորութեան կանգնման մասին։

Խարայէլ Օրիի այս դեսպանութիւնը թէ-պէտ և պարսից պետութեան կասկածած չարիքը չպատճառեց, սակայն ուրիշ անդարմանելի վեաս մը յառաջ բերաւ, որ յետոյ պատճառ եղաւ նոյն պետութեան բոլորովին. Կործանման, ինչպէս պիտի տեսնենք յաջորդ յօդուածին մէջ։

Հ. ԵԽԱՅԻ Վ. ՏԱԹԵՑԻ

Շարայարելի

Պարտիզակ

## Ի ՄԱՀ ԱՄԻ ՀՆԻՑ

ԵՒ

## Ի ԾՆՈՒՆԴ ԱՄԱՆՈՐՈՅ

1913-1914

Յօրհասական երկանցն ի ցաւս Ամանակ Ասմաթորմին ամսվոռպը ի յոյզ կան խռով՝ Անլոյս երկինք՝ և զիւական շռուչ ի ծով. Բոլորածիր վերջին աւուրց են ամի. Երկիր համայն այլակերպեալ սասանի: Յաւիտենիցն ընդ հուաւ բացցի տապանակ Եւ ի նորին ալուցս անել Տիեզերացը շահապես Արկ'ի շղթայց լուծ կապանել, և կորիցես՝ Ա'մդ Հին՝ յաւէտ...

\* \*

«Այլ միշն ոգիքդ են ի դա, Զայնէ ամբոխ աղէկէզ, Արկցուը խառան ի Կոկորդ, Եկ թաղեացուը զայդ թուրա,.. Ըզմեր սըրտիցը պարտէզ. Մըշակեսցէ Նոր Այգորդ»...

Սակաւառ դասակ փոցունց թերկրեալ յաջողն իւր յառատ հունձ Զիդս ըղձասցի մեծաձայն. — «Հայր հայրենեաց՝ իրաւարար ճշմարիս՝ Կեցցէ յամայր մեր արքայն... Ո՛չ սարդենեաց կամ արծաթոյ սին պըս սակ, Այլ մեր զակունս յեռեալ ի ճոխ մարդ գարիտ, Ամ Ալեսոր, առ արժանիդ մատուցաք»... Իսկ ծերունիդ ընթայ ի շեշտ անայլայլ. Ամենածախ իրբու զկայծակ հըրափայլ Յըսկայական ի քայլափոխս իւր սոտից Արկ յափսիթերս ըզՄարդկութիւն վիրաւից...»

Հէք և պանդոյր՝ արարած, Բշհետ մըտեալ բիւր փառաց... Քզաքնոտի իւր երկոյթ ոչ գիտէ, Այլ սթափեաց, իշխող Դարուց ոգիդ է:

Ճ Ճ Ճ

Միրանի ծով՝ այդ ոսկեծին՝ Երկնից զըրունց ըզվարդենի ասր զգեցցին. Մասեացն ի բարձրը գազաթ Հայ հայրենեաց եկայք Մուսայրդ ի հանդէս, Միրտ անձկայրեաց ըղձակաթ Յամաց հետէ մընայ ձեզ...»

\* \*

Յարքայական ի նարօտ Եւ դու յառաջ մատիր աստ Ամանորոյդ առաւօտ Եւ Մուսայիցդ յառագաստ.

ի բոցավառ թես արևու գիտաւոր  
Բազմենցին դու աւգոստավառ թագաւոր

Եւ պար նոցին շուրջ ըզքն  
Թանեղծ պլասակ ի պարզեւ,  
Եկեալ իջես յլլյարատ  
Աւետաւոր ի բարբառ  
Թէ Տէր ազգիդ արար դատ  
Փրկեաց ըզքեզ սիրավառ.  
Վէճարեսցին քո պարտիք  
Աւանդավէպ թերութեանց,  
Հաստատեսցին փառք նախնիք.  
Երկիւղ դըստերցըդ էանց...

\*  
\*\*

Բարեաւ գալուստդ Ամանոր,  
— Զորքանիս մեզ թերես շնորհ...  
Բաշիեա պարզես ի ծոցէդ  
Բզբոյս, մական քո հըզօր,  
Բանակեցո կացո դէտ  
Զանդորրական թող ըզզօր...

ԵՌՌ շաբլեսցեն ընձիւղեսցին փառաւոր  
Լին ծաղկունց բանաւոր...  
Հող որ զարին բողոքէր  
Հանցէ ըզգիառս Արարչին...  
Զարդարեսցէ ինքըն Տէր  
Զիւր ըզպարտէզ առաջին:

\*  
\*\*

Տէ՛ս, Նահապէտ Հայկ Յարէթեան,  
Զանփառունակ տեսցես զերկիրդ ի ծիծաղ  
Սաղարթախիւ ի գալարեաց նոր պատեան  
Հայստանիդ ըզզօրացեալ սունկ մատադ:

## ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԸՆ ՄՆՈՒԾԸ • ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՍԱԿԻՆ

Որ փոթորկէն արմատակիւ ետած  
սիրուն ծաղկիք մը պէս՝ ու պանդուիտ  
ծիծենակիք մը բախտով՝ տարածամ  
ու անալիկալ՝ մահւան անգութ սլաւ  
տէն տապաւէցուաւ...

(Առ Ազմուաշուր Ցիկիթ Կատարիթէ  
Զրախեամ, Սիմֆենոսպուլ)

Գարնանակեղ թ'երբէք արեգ մը այգուն  
Ալբայական ծիրաններու բոսորէն

Հազիւ ահա ոսկեփայլ դէ՛մբը սիրուն  
Դիցուցոյ պէս ցոյց տայ մեզի՝ ու նորէն  
Դժոխացի ծուկ մութ մութ ամպեր  
Գան փոխարկել օ՛րը զիշեր,  
— Ըսէ՛ք ինծի, ով մարդիկ,  
Ինչո՞ւ էք դուք տրամալիք...  
Կամ երբ տեսնէք վարդի կոկոն մը կար-  
միր  
Դեռ նոր բացուած՝ ու ոստաբէկ ցողուն  
իր,  
Ինչո՞ւ համար կը տըհաճի սիրուր ձեր  
Ո՛վ մայրիկներ, ով մէն ազնիւ կիրթ  
անձեր...

\*  
\*\*

— Ո՛հ տըխո՛ւր յիշառակ,  
Տըրտմահաղորդ մութ զիշերներ անյա-  
տակ...  
Ա՛խ, դուք զիտէ՛ք ինչ ըսել է թառամիլ  
կեանցի վարդին կարմիր կոկոն նորածիլ...  
Բայց բիւր զըրախտ վարդերու՝  
Ամենազարմ պերն ծաղիկներն աշխարհիս  
Եթէ մէկտեղ փունջ մը կազմէք հրաշալիք,  
Դեռ շան հեռու շատ հեռու  
Աննց արժէքն է քան զիս.  
— Ինծի սուզեր յաճախեցէք ու լալիք՝  
Ով սիրելի իմ քուրիկներ, ով մարիկ՝  
Ով դու դժրախտ իմ ամուսին թամա-  
րիկ...

\*  
\*\*

Ե՛ս իսկ, այո՛, ե՛ս այդ ծաղիկն եմ սի-  
րուն՝  
Ուակ կեանցին բեկաւ ոստիկը ճրկուն.  
Աշխարհիս մէջ ապերջանիկ մընացին  
Արենակից սիրելիներս, անրադդ կին...  
Տարապայման համառօտ  
Երկինց ինձ կեանց շընորհեց,  
Անուշ մայրիկն յար կարօտ  
Պիտի մընայ՝ զի չէր մերձ  
Խւր սիրելի իւր աննըման որդեկին  
Երբ սա թողուց աշխարհ թըռու վեր եր-  
կին...  
— Արենակից ով հարազատ սիրելիք՝

3

Եւ ով ամէն դուք որ կը կըէք սիրտ ի՞երունի հօրս ու քոյրերուս, ահ, սըր-  
փափկիկ  
Լացէք լացէք դառնագին  
Լացէք անվերջ անկումն անբաղդ անձեւ  
դու

Երիտասարդ հասակին

Սազմուեցէք լացուկոծի ալէլու...

Բայց ոչ, սակայն մի լաք վըրաս դուք  
երրէք,

Ով սիրելի մայր իմ՝ քոյրեր՝ բարեկամք,  
ինչո՞ւ լալ երթ համօրէն մարդ ինձ պէս  
հէք՝

Վաղիկ կամ ուշ պիտ' ունենայ հոգե-  
վարք...

Ու ինչո՞ւ լալ երթ ճշմարիտ ու անվերջ  
կեանքին շընորհն ինձ տըրուեցաւ երկինք  
պերճ...

Մի՛ լար մայրիկ, մի՛ լաք քոյրեր՝ եղ-  
րայրներ,

Երջանկութեան ես հոս գագաթն եմ կանգ-  
ներ...

Միխթարավանք, 13 Նոյ. 1913

### Տ ա պ ա ն տ գ ի ը

(Ար. Այտ. Ին)

Ես որ կեանքէս զըրկըւեցայ անվայել,  
կը կոչուէի դանիէլեան դանիէլ.

— Լացէք լացէք, ով անցորդներ, իմ վը-  
րասաս,

Զի անհո՞ւն է աշխարհիս մէջ իմ վընաս:  
Արու զաւակ տասն եղբայրներ էինք մենք,

Աւազ, եղանք անզութ Մահին զոհ ամէնք.  
Վերջինն եմ ես ծաղկահասակ ողբայիս.

Քըսան և ութը տարեկան հասակիս  
Գիրճ արեգակս երկրի համար մըթացաւ,  
Մարմարս երկինք՝ այս շիրմին տակ մութ  
անձաւ...

\*  
\*\*

Անխի՞զն մանգաղ՝ որ կը հընձես կեանքը  
մեր,  
Անվերջ վըշտի դաժան սուրով խոցեցիր

— Ով կեանք, Աշխարհի, ով Յոյս՝ դո՞ւն  
ալ ես պատիր...

\*  
\*\*

Ազգատոհմիս յոյսը միակ՝ վրան երկրի,  
կը կարծէին թէ ցեղն ինձմով պիտ բեր-  
կրի...

— Եղուկ, երկինք չըհաճեցաւ շընորհել  
Որ յափտեան աճէր մեր տունկը նորել:  
Լացէք լացէք, ով անցորդներ իմ վըրաս  
Զի անհուն է աշխարհիս մէջ իմ վընաս,

\*  
\*\*

Չորս տարիներ Առողջութիւնն անընդհատ  
Փընտուեցի ես՝ բայց չըզգտայ՝ այլ միշտ  
վատ.

Եւ հուսկ այստեղ՝ օտարական ու պան-  
դուխտ

Խըփեցի աչքս. իմ այս վերջին եղաւ  
ուխտ.

— Անիծեցէք, ով սիրելիք, մահն անզութ:  
Որ տարաժամ ձօնեց ինձի տապան մութ:

Հ. Գր. Ա. Կոչարյան

Դարս, 22 Օուլիս 1913

### Ի ՏԱՎԱՅԻ ՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

ՈՒՄԲԵՐԹՈ ԳՐԱՔԲԻԱ

Պէյրութ ցամաց ելած ատենս՝ ուսկից  
մտադիր էի բարձրանալ Տաւրոսի հակ-  
ամրութեանց շլթաներու մէջէն, դէպի Փոքր  
Ասիոյ կեղրոնը, հետս բացի անփորձ  
ճանապարհորդի մը թէթէ պայուսակէն,  
կը կրէի նաև խել մը ծանրացուցիչ գա-  
ղափարներ ու նախապաշարութներ. և  
զրբերէն քաղուած պատրանցներ՝ մեծաւ  
մասամբ բանաստեղծական և առասպելա-  
կան նկարագրով: